

<https://doi.org/10.46991/hc.2025.22.1.068>

Reactions to the Martyrdom of Christapor Mikaelyan in the Armenian Press and among the Caucasian Armenian Intelligentsia

Hovik Grigoryan

<https://orcid.org/0000-0001-9211-1442>

YSU, Faculty of History, Associate Professor at the Chair of Armenian History, PhD

hovgrigoryan@ysu.am

Keywords: Christaphor Mikaelyan, Leo, Avetik Isahakyan, Stepan Ter-Avetikyan, Mikael Varandyan, “Droshak”, “Mshak”, “Dzayn Hayrenyats”, martyrdom, obituary.

The public, political, journalistic, and revolutionary activities of Christaphor Mikaelyan, founder and leader of the ARF, have been a subject of serious discussions among both his ideological allies and critics during the 120 years following his martyrdom. Extensive studies dedicated to him have been left by prominent ARF figures such as A. Aharonyan, M. Varandyan, Ye. Frangyan, and others. These works, as a rule, were created many years after K. Mikaelyan's martyrdom, and their authors had the opportunity to present the image of the ARF leader against the backdrop of the turbulent and tragic events that transpired, and their lessons. Meanwhile, the words of appreciation and regret dedicated to the ARF leader on the occasion of his martyrdom, published in the Armenian press or found in the letters of his individual comrades-in-arms, have largely remained outside the attention of researchers. These evaluations, voiced under the fresh impression of the events, which also contain serious questions about the future of the ARF and the Armenian liberation struggle, allow for a more complete understanding of Christaphor's image and reveal the real prestige he had not only within the ARF ranks but also among the Caucasian-Armenian intelligentsia. This submitted article is the first attempt to unveil these aspects.

The obituaries and words of appreciation published in the press, as a rule, were created in the first weeks following the Vitosha disaster and are characterized by their Aesopian language. They bypass the revolutionary characteristics of the ARF leader and the actual circumstances of his martyrdom, primarily revealing and praising his undeniable human virtues: his modest lifestyle, selflessness, ideological devotion, being an “iron man,” a fanatic of thought and idea, a “radiant beacon, a lighthouse showing distant horizons...” for his disciples and friends.

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 68-79



Received: 15.06.2025

Revised: 13.08.2025

Accepted: 16.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Specifically, the words of remembrance and respect by Leo and St. Ter-Avetikyan are drafted in this spirit.

In contrast to the materials published in the legal and illegal press, and the obituary leaflets issued by the ARF Caucasian structures, the image of the martyred Christaphor is more fully presented in the hitherto unknown letters of the prominent poet Avetik Isahakyan. These letters reveal Christaphor's role as the founder and leader of the ARF, his significant involvement in the Armenian liberation struggle, and his personal involvement in the poet's life. The poet, who experienced a great personal shock due to the Vitosha disaster, makes serious and substantiated observations about Christaphor's role in Armenian history, the irreversibility of his loss for the ARF, and the impossibility of finding an equivalent replacement for him.

Քրիստափոր Միքայելյանի նահատակության արձագանքները հայ մամուլի էջերում և կուլկասահայ մտավորականության միջավայրում

Հովիկ Գրիգորյան

ԵՊՀ պատմության ֆակուլտետ, հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ

Հիմնաբառեր՝ Քրիստափոր Միքայելյան, Լեո, Ավետիք Իսահակյան, Ստեփան Տեր-Ավետիքյան, «Դրոշակ», «Մշակ», «Զայն Հայրենյաց», նահատակություն, թոուցիկ մահախոսական:

ՀՅԴ հիմնադիր ու առաջնորդ Քրիստափոր Միքայելյանի հասարակական, քաղաքական, հրապարակախոսական ու հեղափոխական գործունեությունը նրա նահատակությանը հաջորդած 120 տարիներին եղել է լուրջ քննարկումների առարկա ինչպես գաղափարակիցների, այնպես էլ քննադատների կողմից: Նրան նվիրված ծավալուն ուսումնասիրություններ են թողել ՀՅԴ նշանավոր գործիչներ Ա. Ահարոնյանը, Մ. Վարանդյանը, Ե. Ֆրանգյանը և ուրիշներ: Այդ գործերը, որպես կանոն, ստեղծվել են Ք. Միքայելյանի նահատակվելուց երկար տարիներ անց, և դրանց հեղինակները հնարավորություն են ունեցել տեղի ունեցած բոլոր, նաև ողբերգական իրադարձությունների համապատկերի ու դասերի հենքի վրա ներկայացնելու ՀՅԴ առաջնորդի կերպարը: Մինչդեռ հետազոտողների ուշադրությունից գրեթե դուրս են մնացել ՀՅԴ առաջնորդի նահատակության առթիվ նրան նվիրված գնահատանքի ու ավստոսանքի այն խոսքերը, որոնք հրապարակվել են հայ մամուլի էջերում կամ տեղ գտել նրա առանձին զինակիցների նամակներում: Դեպքերի թարմ տպավորության տակ ինչպես այդ գնահատականները, որոնցում առկա են նաև ՀՅԴ-ի ու Հայոց ազատամարտի ապագայի վերաբերյալ լուրջ հարցադրումներ, հնարավորություն են տալիս ավելի ամբողջական դարձնելու Քրիստափորի կերպարը ու վերհանելու այն իրական վարկանիշը, որը նա ունեցել է ոչ միայն ՀՅԴ շարքերում, այլև կուլկասահայ մտավորականության միջավայրում: Տպագրության ներկայացված հոդվածն այդ ծալքերը բացելու առաջին փորձն է:

Քրիստափոր Միքայելյանի նահատակության արձագանքները հայ մամուլի էջերում և
կովկասահայ մտավորականության միջավայրում

Քննության ենթարկվող մահախոսականներն ու մամուլում հրապարակված գնահատանքի խոսքերը, որպես կանոն, ստեղծվել են Վիտոռի աղետին հաջորդած առաջին շաբաթներին և ունեն այն առանձնահատկությունը, որ գրված են եզոպոսյան լեզվով: Դրանցում շրջանցվում են ՀՅԴ առաջնորդի հեղափոխական բնութագրիչներն ու նահատակության իրական հանգամանքները և առավելապես բացահայտվում ու դրվատվում են նրա մարդկային անուրանալի առաքինությունները՝ համեստ կենցաղը, անարժաթասիրությունը, գաղափարապաշտ ու «երկաթե մարդ» լինելը, մտքի ու գաղափարի ֆանատիկոս լինելը, իր աշակերտների և ընկերների համար «լուսաճաճանչ փարոս, հեռու հորիզոններ ցոյց տուող փարոս...» լինելը: Մասնավորապես այդ ոգով են շարադրված Լեոյի ու Ս. Տեր-Ավետիքյանի հիշատակի ու հարգանքի խոսքերը:

Ի տարբերություն լեզալ ու անլեզալ մամուլում տպագրված նյութերի և ՀՅԴ Կովկասյան կառույցների կողմից հրապարակված մահախոսական թռուցիկների՝ նահատակ Քրիստափորի կերպարն ավելի ամբողջական է ներկայացված նշանավոր բանաստեղծ Ավետիք Բասիակյանի մինչ վերջերս անհայտ նամակներում: Դրանք բացահայտում են Քրիստափորի՝ ՀՅԴ հիմնադիրն ու առաջնորդը լինելու հանգամանքը, նրա կարևոր դերակատարությունը հայ ազատագրական պայքարում և անձնապես՝ բանաստեղծի կյանքում: Վիտոռի աղետի պատճառով անձնական մեծ ցնցում ապրած բանաստեղծը լուրջ ու հիմնավոր դիտարկումներ է կատարում Հայոց պատմության մեջ Քրիստափորի ունեցած դերի, ՀՅԴ-ի համար նրա կորստի անդառնալիության և նրան հավասարազոր փոխարինող գտնելու անհնարինության մասին:

Отклики на мученическую смерть Кристафора Микаеляна на страницах армянской прессы
и в среде армянской интеллигенции Кавказа

Овик Григорян

ЕГУ, Исторический факультет, кафедры истории Армении, кандидат исторических наук,
доцент

Ключевые слова: Кристафор Микаэлян, Лео, Аветик Исаакян, Степан Тер-Аветикян, Микаэл Варандян, «Дрошак», «Мшак», «Дзайн Айрениц», мученичество, некролог-листовка.

Общественная, политическая, публицистическая и революционная деятельность Кристафора Микаэляна, основателя и лидера АРФД, на протяжении 120 лет, прошедших с его гибели, была предметом серьезных дискуссий как среди его единомышленников, так и среди критиков. Серьезные исследования, посвященные ему, провели видные деятели АРФД: А. Ааронян, М. Варандян, Е. Франгян и другие. Эти работы, как правило, были

созданы спустя много лет после гибели К. Микаэляна, и их авторы имели возможность представить образ лидера АРФД на фоне бурных, а также трагических событий и их уроков. Между тем, почти вне поля зрения исследователей остались слова оценки и сожаления, посвященные лидеру АРФД по случаю его гибели, которые были опубликованы на страницах армянской печати или нашли место в письмах его отдельных соратников. Эти оценки, прозвучавшие под свежим впечатлением от событий, в которых присутствуют также серьезные вопросы о будущем АРФД и армянской освободительной борьбы, позволяют более основательно раскрыть образ Кристафора и выявить тот реальный авторитет, который он имел не только в рядах АРФД, но и в среде кавказско-армянской интеллигенции. Представленная к печати статья является первой попыткой раскрыть эти аспекты.

Рассматриваемые некрологи и слова признательности, опубликованные в прессе, как правило, были созданы в первые недели после Витошской катастрофы и имеют ту особенность, что написаны Эзоповым языком. В них обойдены революционные характеристики лидера АРФД и истинные обстоятельства его мученической гибели, и в основном раскрываются и восхваляются его неоспоримые человеческие добродетели: скромный быт, бескорыстие, идейная преданность и «железный человек», фанатик мысли и идеи, «лучезарный маяк, показывающий далекие горизонты...» для своих учеников и друзей. В частности, в этом духе изложены слова памяти и уважения Лео и Ст. Тер-Аветикяна.

В отличие от материалов, опубликованных в легальной и нелегальной печати, и некрологов, изданных кавказскими структурами АРФД, образ погибшего Кристафора наиболее полноценным образом представлен в доселе неизвестных письмах неизвестных писем выдающегося поэта Аветика Исаакяна. Они раскрывают обстоятельство того, что Кристафор был основателем и лидером АРФД, его важную роль в армянской освободительной борьбе и лично в жизни поэта. Поэт, переживший большое личное потрясение из-за Витошской катастрофы, делает серьезные и обоснованные замечания о роли Кристафора в истории Армении, о безвозвратности его потери для АРФД и о невозможности найти ему равноценную замену.

* * *

Ներածություն: ՀՅԴ հիմնադիր և առաջնորդ Բ. Միքայելյանի գործունեությունն ու հատկապես առեղծվածային նահատակությունը եղել են ինչպես ժամանակակիցների, այնպես էլ հետագա սերունդների լուրջ քննարկումների առարկա: Նրա վերաբերյալ հնչել են տարբեր, առանձին դեպքերում՝ միմյանց փոխացառող տեսակետներ: Քրիստափոր Միքայելյան մարդուն, հային, հեղափոխականին, մտածողին ու հրապարակախոսին բնութագրող ծավալուն գործեր են թողել Ավետիս Ահարոնյանը, Միքայել Վարանդյանը, Երվանդ Ֆրանգյանը և ուրիշներ [Ահարոնյան Ա., 1926, Վարանդյան Մ. //«Հայրենիք» ամսագիր, Պոսթրն, 1924, NN 3. 5, 8, 12, Երվանդ Ֆրանգյան, 1917]: Այնուհանդերձ, կարծում ենք, որ նրա նահատակության 120-րդ տարեիցը հիմք է տալիս մեկ անգամ ևս անդրադառնալու խնդրին, վերհիշելու այն բնութագրումներն ու գնահատականները,

**Քրիստափոր Միքայելյանի նահատակության արձագանքները հայ մամուլի էջերում և
կուկասահայ մտավորականության միջավայրում**

որոնք այդ օրերին տեղ են գտել ժամանակի հայ պարբերական մամուլի էջերում և արձանագրել այն մեծ ցնցումն ու ծանր ապրումները, որ նրա նահատակությունը պատճառել է իրեն ճանաչող հայ մտավորականության ամեննին ոչ անհայտ ներկայացուցիչներին: Այդ մասին վկայում են ինչպես մինչ վերջերս անհայտ արխիվային վավերագրերը, այնպես էլ ժամանակի մամուլից քաղված, ցայսօր հետազոտողների տեսադաշտից դուրս մնացած նյութերը: Տպագրության ներկայացվող հոդվածը խնդիրն այդ տեսանկյունից պարզաբանելու առաջին փորձն է:

Վիտոռի աղետի արձագանքները հայ մամուլում և մտավորականության միջավայրում: 1905 թ. մարտի 4-ին՝ Արյունոտ սուլթանի համար նախատեսված ռումբերի փորձարկման ժամանակ, Բուլղարիայում՝ Վիտոռ լեռան լանջին, նահատակվեցին ՀՅԴ առաջնորդ Ք. Միքայելյանն ու ՀՅԴ Կ. Պոլսի Ցուցական մարմնի անդամ Վռամշապուհ Քենդիրյանը: Ք. Միքայելյանի նահատակությունն անսպասելի ու ծանր հարված էր դաշնակցության համար: Չլինելով բեղուն գրչի տեր հրապարակախոս ու ոչ էլ փայլուն հոեւոր՝ Քրիստափորը, այնուհանդերձ, տակտի զգացողության, երկաթյա կամքի, կազմակերպական անուրանալի ընդունակությունների, պարզ կենցաղի, բարոյական անաղարտության և ընդգծված գաղափարականության շնորհիվ անփոխարինելի ուժ էր ՀՅԴ ղեկավարության մեջ: Բնական է, որ այդ օրերին Ժնևում գումարված Դաշնակցության խորհուրդը, ստանալով աղետի լուրը, ընդհատեց իր աշխատանքը: Նրա մասնակիցները շտապեցին Սոֆիա՝ հարգանքի ու հրաժեշտի վերջին տուրքը մատուցելու իրենց զինակիցներին ու կուսակցության անառարկելի առաջնորդին:

1905 թ. մարտի 10/23-ին Բուլղարիայի մայրաքաղաքն ականատես դարձավ Հայկական շարժման զույգ նահատակների հիշատակին կազմակերպված աննախադեպ սգո հանդեսին, որին մասնակցում էին հազարավոր հայեր, մակեդոնացիներ ու բուլղարներ, այդ թվում՝ բուլղար-մակեդոնական շարժման անվանի առաջնորդներ [Աղետաւոր մահը // «Դրօշակ», 1905, N 4, էջ 52-53]: ՀՅԴ առաջնորդին նվիրված ձոն էր այդ օրերին «Դրօշակ»-ում տպագրված մահախոսական խմբագրականը, թեև հասկանալի պատճառներով անորոշ, տարտամ ու եզոպոսյան լեզվով էին ներկայացվում նրա գործունեության վերջին շրջանն ու նահատակության իրական հանգամանքները. «Նա ինքը գնաց արեան ու զոհողութեան ճանապարհով, նա ինքը գահավեժ սլացաւ դէպի կեանքի յորձանուտ հոսանքը, ուսկից դարձ չկայ... Եւ ընկաւ կէս – ճանապարհին, շանթահարած անարգ պատահարից...» [Քրիստափոր Միքայելեան // «Դրօշակ», 1905, N 4, էջ 51]:

Ք. Միքայելյանի զոհվելու հանգամանքների վերաբերյալ նույն անորոշությունն առկա էր նաև ՀՅԴ արևելյան բյուրոյի կողմից այդ օրերին հրապարակված թուրքիկ մահախոսականում, որը հայերեն ու վրացերեն լեզուներով բազմացված տարածվում էր հայկական եկեղեցիներում՝ Քրիստափորին նվիրված արարողությունների մեծաքանակ մասնակիցների շրջանում: Դրանում սուսկ մատնանշվում էին հանգուցյալի մարդկային

առաքինությունը, գաղափարականությունը, անսահման նվիրվածությունը հայրենիքի ազատագրման գործին ու ՀՅԴ-ի կյանքում ունեցած լուրջ դերակատարությանը [Հասմիկ Ա. Համբարձումյան // «Վեմ», թիվ 3, 2009, հավելված, էջ XVIII-XX]:

Միայն երկու տարի անց, երբ այլևս հարկ չկար սքողելու Քրիստափորի կյանքի վերջին էջերը, «Դրոշակը» բացեց փակագծերը՝ յուրովի լրացնելով մահախոսականի անորոշ տողերը. «Դարերով հալածված ու տառապած հայ ժողովրդի բողոքն էր ներկայացնում նա իր էությունը, և նրա դարերի կրած զրկանքների ու վիրավորանքների յաշլեյարդարությունն էր դարձնում իր գոռոզ կրծքում. երեք հարիւր հազար նահատակների վրեժն էր սնուցանում նա իր անգուսպ սրտում: Եւ ռազմիկների մի ամբողջ բանակ նրա ետևը կանգնած սրտատրոփ սպասում էր արդար հատուցման այն ոճրագործի, որի ձեռքերով այնչափ դիակներ փռեցան մեր հայրենիքի աւերված ու մոխրացած փլատակների տակ: Մի ամբողջ ժողովուրդ, շունչը կտրած, ականջ էր դառնել լսելու մեծ պայթիւնը և Վիշապի տապալումը: Սակայն բախտը ուրիշ կերպ էր տնօրինել: Սպանիչ պայթիւնը տեղի ունեցաւ անժամանակ և իր հետ անդարձ կերպով տարաւ ազատութեան Մարտիկին» [Քրիստափորի եւ Էդվարդի յիշատակին // «Դրոշակ», 1907, N 3, էջ 42-43]:

Քրիստափոր Միքայելյանի նահատակության լուրը ցավով ընդունվեց հայ հասարակության կողմից: Հարգանքի ու ավստոսանքի զուսպ խոսքեր հնչեցին նաև քաղաքական հակառակորդների ճամբարից: Հեռավոր ԱՄՆ-ում հրատարակվող վերակազմյալ հնչակյան «Ձայն հայրենյաց» թերթի «Լուսին» խորագրով հակիրճ մահախոսականն ազդարարում էր. «Դրոշակեանութեան առաջին քրմապետը կամ եթէ կ'ուզեք մեծ Շեյխն է որ կ'անյայտանայ Քրիստափոր Միքայելեանի մահովը: Շփոթ ու մութ բան մը կայ իր այդ մահուան մէջ որուն յանկարծահաս եղերականութիւնը՝ չես գիտեր ի՛նչ կասկածելի հանգամանքով մը կը պղտորի ու անհանգիստ կ'ընէ, բայց որ կը յարմարի ա՛յնքան իր շփոթ ու մութ կեանքին: Պօմպի մը պայթումին գոհ գացեր է Սօֆիայի մէջ, ինչպէս կը գրեն դրոշակեան թերթերը՝ պարագաներուն խորհրդաւոր ձև մը տալու մասնաւոր խնամքով մը, որ տարօրինակ պիտի չի թուէր վերջապէս, եթէ քիչ մը աւելի մեկին ըլլար... Այդ չէ՛ սակայն կարևորը: Քիչ մարդ գերեզման իջած է այնքան ծանրաբեռն խղճմտանքով՝ որքան դրոշակեանութեան այս գերագոյն վարիչը: ...Լավագոյն դիրքը զոր պատշաճ կը սեպենք իր գերեզմանին առջև՝ անողոք ճակատագրականութիւններու թելադրած խորհրդապահ լուսինն է...» [Տերտունի // «Ձայն հայրենեաց», 26 ապրիլի 1905, N 337, էջ 2-3]:

Գրաքննության պայմաններում գնահատանքի խոսք ասաց նաև կովկասահայ մամուլը, առաջին հերթին՝ «Մշակը»: Հատկապէս հուզիչ ու անկեղծ շեշտադրմամբ էր շարադրված Լեոյի գրչին պատկանող «Լավ մարդու հիշատակին» հոդվածը: Այն ձոն էր Քրիստափոր Միքայելյան անհատի հիշատակին: Դրանում հասկանալի պատճառներով շրջանցվում էին Քրիստափոր Միքայելյան հեղափոխականն ու քաղաքական գործիչը և եզոպոսյան լեզվով էին ներկայացվում նրա գործունեության վերջին շրջանը, նահատակության իրական հանգամանքները և հեղափոխական լինելու փաստը: Դրա

**Քրիստափոր Միքայելյանի նահատակության արձագանքները հայ մամուլի էջերում և
կուկասահայ մտավորականության միջավայրում**

կողքին դրվատվում էին Քրիստափորի երկաթե կամքը, համեստությունն ու պարզությունը, անարժաթասիրությունը, «մտքի ու գաղափարի ֆանատիկոս» լինելը:

Նկատի ունենալով տարիներ հետո Լեոյի գնահատականների մեջ տեղի ունենալիք արմատական փոփոխությունները, հարկ ենք համարում հետևյալ ծավալուն քաղվածքները բերել նրա հոդվածից. «Մեր Քրիստափորը, չնայած իր վտիտ, փխրուն արտաքինին, երկաթե մարդ էր: Ճիշդ երկաթե: Միայն երկաթը կարող է այնքան անհոգի սառնությամբ վերաբերվել դեպի աշխարհը դորդեցնող կենսական հոգսերը- զգեստի, ուտելիքի, կուշտ ու հանգիստ լինելու հոգսերը... «Մեր Քրիստափորը»... համեստությամբ ու պարզության մի ծայրագոյն օրինակ, Եղիշեի գեղանկարած հերոսության մի նմուշն էր... Նրա կամաւոր աղքատությունը, անարժաթութիւնը, նրա մարմինը ծածկող հնոտիները, երբեք թոյլ չէին տալիս, որ այդ մարդու վերաբերությամբ որ և է նիւթական, շահադիտական հասկացողութիւն ոչ միայն կազմվի, այլ և կազմվելու հնարաւորութիւն անգամ ունենայ: Նա էլ ապրում էր իր սեփական երգի քաղցրութիւնը ծծելով: Իսկ նրա երգը կեանքի ընթացքում, մինչև վերջը, մեկ էր - գաղափար... Նրան սպանելու համար բաւական էր մի բան – ջարդել, ոչնչացնել գաղափարը. առանց սրան նա, Ճիշդ որ, չէր ապրի և ոչ մի րօպէ: ...Նա յիշեցնում էր ինչ-որ անցած էպիքական շրջանների մի մարդ, որին չէր կարելի հասկանալ մեր գործնական ժամանակներում...:

...Մի բուն, հրաբխային բնաւորութիւն չէր «մեր Քրիստափորը»... բռնկվել, պայթել չը գիտէր նա, ներքին մի խաղաղ կրակից համաչափ, հանդարտիկ այրվող էր... Բայց նա մի շատ փայլուն ապացոյց էր, որ այդ հեզ ու մեղմ յատկութիւնների տակ էլ կարող է անսասան համոզմունք, տոկուն հաստատականութիւն ամբարված լինել: Դա ժայռի ճակատից աղմուկով ու որոտով ցած նետվող մի վտակ չէր, այլ դալար մարգի մէջ անձայն դուրս հոսող մի յորդառատ, վճիտ աղբիւր, որի ակը երբեք չէ նուագում, որի ջրերը չեն կանգնում արգելքների առաջ:

...Ներել չէր կարող նա միայն մի բան–գաղափարական դաւաճանութիւնը:

...Կարելի էր չը հաւանել նրա հայեացքները, կարելի էր նոյն իսկ դատապարտել նրա գաղափարական աղանդաւորութիւնը... Բայց... չէր կարելի այնու ամենայնիւ չը յարգել, չը սիրել նրան ամբողջ սրտով, չը մեծարել նրա մէջ անհուն ու անսպառ եռանդը, չը մեծարել ու մտքի ֆանատիկոսին:

Մտքի, գաղափարի ֆանատիկոսներ... Նրանք են կեանքի զարդերը, սրանք են գրանիտեայ փարոսների պէս կանգնում կեանքի ալէկոծուած, խաւար ովկիանոսում:

...Եւ այս սիրելի դէմքը այսօր սուգի շրջանակի մէջ դրված մի անուն է միայն: Անուն միայն, այո, բայց ի՛նչ անուն...» [Լէօ // «Մշակ», 10 մարտի 1905, N 42, էջ 1-2]:

Ցարական գրաքննության պայմաններում Լեոյի խոսքը փայլուն դամբանական էր նահատակված գործչի հիշատակին: Թեև հարկ է նշել, որ երկու տասնամյակ անց նույն Լեոյի կողմից Ք. Միքայելյան քաղաքական գործչին ու հեղափոխականին տրված

գնահատականները միանգամայն այլ հնչեղություն ունեին, և դրանց վրա պարզորոշ զգացվում էր ժամանակի իշխող բուլժնիկյան մտայնության կնիքը:

«Անցյալից» խորագրով իր հուշերում Լեոն ոչ միայն անխնա աղճատում էր Քրիստափոր Միքայելյան գործչի իրական կերպարը, այլև փաստական կոպիտ վրիպումներ թույլ տալիս նրա գործունեության վերջին շրջանի վերաբերյալ մանրամասներ շարադրելիս [Լեո, 1925, էջ 127-128, 141]: Որպես ամփոփում ու պատասխան այն բնական հարցադրման, թե, ի վերջո, Լեոյի որ գնահատականն էր ավելի օբյեկտիվ և իրականությանը մոտ, կարող ենք անվերապահ ու վստահ արձանագրել, որ Ք. Միքայելյանին գնահատելիս Լեոն ավելի անկեղծ ու օբյեկտիվ էր 1905 թվականին: Ք. Միքայելյանը մնացել էր այնպիսին, ինչպիսին էր մինչ իր նահատակությունը: Փոխվել էր Լեոն՝ իր որդեգրած նոր արժեհամակարգով:

Լեոյի՝ Քրիստափորի հիշատակին նվիրված մահախոսականի յուրօրինակ շարունակությունն էր նաև կովկասահայ մտավորական Ս. Տեր-Ավետիքյանի կողմից դարձյալ «Մշակ»-ում օրեր անց տպագրած «Անմոռանալի գործչի հիշատակին» հոդվածը: «Մեր հասարակական գործիչներին, մեր իսկական բարերարներին մենք սովորաբար ճանաչում ու գնահատում ենք նրանց մահից յետոյ,– ասվում էր դրանում,– միմիայն անողորմ մահն է մեզ ցնցում, մեր սրտի ու մտքի վրա ազդում, մեր աչքերը բաց անում ու ստիպում, որ բևեռենք մեր տեսողությունը այն թանկագին գանձի վրա...: Մենք միշտ անտարբեր ենք գտնվում դեպի այդպիսի գանձը մեր ձեռքում եղած ժամանակ...:

Շատ հագուստներն են մեր գործիչներից պահպանում իրանց ամբողջ կորովը, եռանդը, աշխոյժը, երիտասարդական թարմությունն ու երիտասարդական բուռն հաւատը դեպի հասարակական իդեալների յաղթանակը: Այդ հագուստների թիւն ամենայն իրաւամբ պատկանում է հանգուցեալ Քրիստափոր Միքայելեանը, «Մեր Քրիստափորը», մեր անգուգական, մեր անմոռանալի, մեր պաշտելի Քրիստափորը, որին ողբում է այժմս հայ ինտելիգենցիայի ամենաստուար մասը, որը իր բազմաթիւ ընկերների ու աշակերտների համար տարիներ շարունակ եղել է լուսաճաճանչ փարոս, հեռու հորիզոններ ցոյց տուող փարոս...»:

Քրիստափորի հիշատակին նվիրված դամբանականը հոդվածագիրն ամփոփում է՝ արձանագրելով հետևյալը. «Վերջին մի քանի տարիներում ոչ մի մահ այնպիսի խորը, ցնցող տպավորութիւն չի գործել հայ ինտելիգենտ շրջանների վրա, ինչպէս մեր նահատակ Քրիստափորի մահը. կորուստը շատ ծանր է, նոյն չափ անտանելի...» [Տեր-Աւետիքեան Ստ., «Մշակ», 20 մարտի 1905, N 50, էջ 2]:

Միայն մեկ տարի անց Ք. Միքայելյանի մահվան տարելիցի կապակցությամբ, երբ այլևս հարկ չկար քողարկելու նրա նահատակության իրական հանգամանքները, իսկ գրաքննությունն էլ էապես մեղմացած էր, «Մշակը» մի կողմ թողեց եզոպոսյան լեզուն՝ ազդարարելով Քրիստափորի իրական դերակատարությունը՝ որպես արևմտահայ ազատամարտի առանցքային ու կազմակերպիչ գործիչներից մեկի՝ որպես դաշնակցություն կուսակցության առաջնորդի [Անձնուեր գործողի յիշատակին // «Մշակ», 12 մարտի 1906, N 55, էջ 1-2]:

**Քրիստափոր Միքայելյանի նահատակության արձագանքները հայ մամուլի էջերում և
կովկասահայ մտավորականության միջավայրում**

Քրիստափորն Ավետիք Իսահակյանի գնահատականներում: Լեոյի ու Ս. Տեր-Ավետիքյանի հոդվածներում տեղ գտած գնահատականներն ու Ք. Միքայելյանի անձի բնութագրումները, որոնք այդ օրերին կովկասահայ մտավորականության միջավայրում տիրող տրամադրությունների խտացումն էին, ամբողջանում, որոշակիանում, ամեն տեսակի գաղտնապահությունից ու պայմանականություններից ազատվում և նոր լույսով են ներկայանում նշանավոր բանաստեղծ Ավետիք Իսահակյանի՝ այդ օրերին գրած, խորհրդային շրջանում հասկանալի պատճառներով, իսկ ետխորհրդային առաջին շրջանում իներցիայի ուժով մոռացության մատնված ու միայն վերջին տարիներին հրապարակված նամակներում [Գրիգորյան Հովիկ, «ՎԷՄ», 2012, թիվ 3, էջ 208-210]:

Հայտնի է, որ Ա. Իսահակյանը դեռևս Օդեսայում անցկացրած աքսորի շրջանում կապեր է ունեցել ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակ» թերթի հետ, իսկ աքսորից հայրենիք վերադառնալուց հետո ոչ միայն գաղափարապես ու կազմակերպորեն հարել է Դաշնակցությանը, այլև մշտական ու սերտ կապ հաստատել Քրիստափոր Միքայելյանի հետ: Թիֆլիսում սկիզբ առած նրանց ծանոթությունն ու ջերմ հարաբերությունները շարունակվել են մինչև Ք. Միքայելյանի եղերական մահը [Գրիգորյան Հովիկ, «ՎԷՄ», 2012, թիվ 3, էջ 204-205]:

Վիտորի աղետից հետո բանաստեղծն անձնական մեծ ցնցում է ապրել: Դա պարզորոշ զգացվում է դեպքի անմիջական տպավորության տակ իր սիրեցյալ Աննա Մատակյանին գրված երկու նամակներում, որոնք թվագրվում են 1905 թ. մարտի 11-ով ու մայիսի 18-ով [Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետ՝ ԳԱԹ), Ավետիք Իսահակյանի ֆոնդ, վավ. N 233 լրացուցիչ, թթ. 31-34]:

Վերոնշյալ նամակներում Ա. Իսահակյանի՝ Ք. Միքայելյանին տված գնահատականները որակապես տարբերվում են նույն օրերին ցարական խիստ գրաքննության ենթարկվող մամուլում տեղ գտած բնութագրումներից: Դրանք պարունակում են ոչ միայն Հայոց պատմության մեջ Քրիստափոր Միքայելյանի տեղն արժևորող հարցադրումներ, այլև առաջ է քաշվում հայ ազատամարտի ու ՀՅԴ-ի համար նրա կորստի անփոխարինելի լինելու մասին հոռետեսական, բնավ ոչ անհիմն ու տասնամյակների փորձով ապացուցված տեսակետը: Բանաստեղծի ապրած ողբերգության ու մեծ ցավի վկայությունն են մարտի 11-ի նամակի ստորև բերվող տողերը. «...Երեկ մի ծա՛նր, սարսափելի գոյժ իմացայ – մեռել է, զոհել է իմ պաշտած – յարգած – աստուածացրած ընկերը – Քրիստափոր Միքայելեանը, յեղափոխութեան մարգարեն, «Դրոշակի» խմբագիրը, մեր հոգու տերը, մեր կուռքը... Ես ինձ հիմա որք եմ զգում. գնա՛ց այն մեծ մարդը, որի համար կեանքը միայն մտածողութիւն, ուրիշների մասին հոգս, ազգի և հայրենիքի համար անյոգնելի և անշահասեր ծառայութիւն էր. նրա կեանքը նահատակութիւն էր. և մենք բոլորս պաշտում էինք նրան և մեռնելու, վտանգւելու գնում նրա գաղափարի համար... [ԳԱԹ, Ավետիք Իսահակյանի ֆոնդ, վավ. N 233 լրացուցիչ, թ. 31]:

Նամակի հետագա տողերում բանաստեղծը բացում է ՀՅԴ նահատակ առաջնորդի հետ իր կապվածության ու նրա հետ ունեցած առանձնահատուկ հարաբերությունների նուրբ ու թերևս մինչ վերջերս անհայտ ծալքերը. «Նա գնա՛ց և աշխարհը սևացավ աչքիս. երբ աշխատում էի կենտրոնանալ գրել մի մեծ գործ, մի մեծ գիրք՝ աչքի առաջ ունեի նրան – այդ անմահ մարդուն, որը պիտի կարդար, գովեր, համբուրեր ինձ, և ես վարձատրված կ'լինեի: Ի՞նչեր չեմ արել նրա համար. երբ նա ինձ առաջարկում էր մի գործ՝ ինչքան էլ վտանգալուր լիներ, ես թոնում էի և երկիւղ ու վտանգ արհամարհելով գործը զուլի բերում... և երբ յաջողութեամբ դառնում էի նրա մոտ – նա համբուրում էր ճակատս և ես անսահման երջանիկ էի զգում ինձ... Իսկ նա հիմա չկայ. հայոց խեղճ ազգը շա՛տ մեծ կորուստ ունեցավ և դեռ շա՛տ երկար ժամանակ կ'զգանք այդ կորուստը, նրա պակասը: Իմ աչքում նա ներկայիս ամենամեծ հայ մարդն էր – ո՞վ կ'հասնի նրան – ոչ ո՛ք...»:

Եւ այս ամենից հետոյ – ի՞նչպես աշխատեմ հիմա: Ձեռքս գործի չի կաշում... միայն նա կարող է ինձ մխիթարել - և նա էլ չ'կայ ու չ'կայ...» [ԳԱԹ, Ավետիք Բսահակյանի ֆոնդ, վավ. N 233 լրացուցիչ, թ. 31-32]:

Թվում էր կանցնի որոշ ժամանակ, և բանաստեղծը շատերի պես կհաղթահարեր ծանր կորստի ցավն ու կվերականգներ հոգու հանդարտությունը: Բայց ավելի քան երկու ամիս անց՝ նրա 1905 թ. մայիսի 18-ին գրած նամակից ակնհայտորեն երևում է, որ Քրիստափոր Միքայելյանի նահատակությունը, իրոք, ծանր կորուստ էր Ավետիք Բսահակյանի համար: Ըստ որում, խնդրի վերաբերյալ նրա հարցադրումներում նկատելի են նոր նրբերանգներ, որոնք, անկասկած, Վիտոշի աղետին հաջորդած շաբաթներին բանաստեղծի ունեցած մտորումների արդյունք են: Նամակում հնչում են նաև լուրջ հարցադրումներ:

Անդրադառնալով իր ցավին՝ բանաստեղծը գրում է. «...Իմ վիշտը այնպիսի տեսակներից չէ, որ շուտով անցնի կամ մխիթարութեան կարոտ լինի. սիրտս այնքան չի մորմոքում ընկերիս կորստի պատճառով, որքան միտքս, չոր միտքս. շա՛տ ընկերներ եմ կորցրել դարձեալ այդ ճամբի վրայ՝ հայրենիքին գոհ, բայց այն ամենը, բոլորը՝ աւել թե պակաս դրանից մեծ բան չէին կարող շինել կամ կատարել. ա՛խ, գոհուողներ շա՛տ կան, օրհնեալ մնայ հայ ժողովուրդը, հազարներ ու հազարներ կան գոհւելու, բայց Քրիստափորի պես մարդիկ հարիւր տարին մի հատ կ'ծնի. նա միլիոնների մէջ մի հատ էր. նա էր ծնել Դաշնակցութիւնը ու նրա հոգին այդ բոլոր[ը] վերց[րել] էր, ...նա մեր զուլիս էր, մեր հոգին, մեր սիրտը...: Բոլորս նրա որդիներն էինք. և նրա կամքն էինք կատարում. այո՛, շատերն են մեռել – լա՛վ ընկերներ, աւելի ջահել, բայց նրանց գոհւելով՝ յեղափոխութիւնը օգտւել էր, իսկ Քրիստափորի մահով՝ յեղափոխութիւնը անբուժելի վնասւեց... ո՞վ պետք է բռնի նրա տեղը... ոչ ոքի չեմ տեսնում հայերիս մէջ, մեզնից ո՛չ ոք արժանի չէ նրա ժառանգը լինելու – ահա՛ իմ վիշտը. և այնքան կ'տուի իմ վիշտը, մինչեւ որ ծագի մի նոր Քրիստափոր... Իսկ ե՛րբ պիտի գայ այդ օրը...» [ԳԱԹ, Ավետիք Բսահակյանի ֆոնդ, վավ. N 233 լրացուցիչ, թ. 33]:

Այն, որ նշանավոր բանաստեղծի հարցադրումները սոսկ պահի տակ ասված զգացմունքային խոսքեր չէին և արտահայտում էին հայոց ազատամարտի ապագայի վերաբերյալ ժամանակի գիտակից ու գաղափարական մտավորականության լուրջ

**Քրիստափոր Միքայելյանի նահատակության արձագանքները հայ մամուլի էջերում և
կուկասահայ մտավորականության միջավայրում**

մտահոգությունները, հստակ երևում է նաև Վիտոշի աղետից անգամ տասնամյակներ անց Քրիստափորի կորստի անուղղելի հետևանքների վերաբերյալ հնչեցված գնահատականներից: Ուշագրավ է, որ Ա. Իսահակյանի նամակներում հնչեցված հարցադրումների մասին որևէ տեղեկատվություն չունեցող Մ. Վարանդյանը Վիտոշի աղետից մոտ 20 տարի անց Ք. Միքայելյանի նահատակության ու ՀՅԴ-ի ու հայության համար դրա ունեցած ծանր հետևանքների մասին հնչեցնում էր գրեթե նույնանման գնահատականներ: Համեմատության համար բերենք Մ. Վարանդյանի հետևյալ հարցադրումները. «Զաւարեան, Ռոստոմ եւ ուրիշներ յաջորդեցին Վարպետին (Քրիստափորին – Ն.Գ.), բայց ոչ ոք փոխարինեց նրան: Շատերը կը գան ու կ'անցնին – ոչ ոք չի փոխարինի նրան:

Մեռաւ այն պահուն, երբ Կովկասի ու հայրենիքի մէջ գոռ անցքեր էին պատրաստուում... մեռաւ այնքա՛ն վաղաժամ, եւ եթէ ապրէր, տարակոյս չկայ, «Դաշնակցութիւնը» եւ հայ ժողովուրդը պիտի կարենային խուսափել շատ սխալներից ու սայթաքումներից: Մահէն յետոյ միայն զգացին ահռելի **բացը**...: Այդպէս եղած է միշտ, այդպէս լինելու է միշտ հայկական իրականութեան մէջ» [Վարանդեան Մ. // «Հայրենիք» ամսագիր, 1924, N 5, էջ 75]:

Եզրակացություն: Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել մի կարևոր հանգամանքի վրա: Պատմության մեջ շատ չեն քաղաքական առաջնորդները, որոնք մահվանից հետո արժանացել են իրենց ժամանակակից ու ճանաչող գործիչների, հատկապես մտավորականության դրվատանքի ու ամփոսանքի ջերմ խոսքերի: Բայց առավել ևս քիչ են նրանք, որոնց ունեցած մարդկային առաքինությունների ու նրանց կորստի անփոխարինելիության վերաբերյալ դեպքերի թարմ տպավորության տակ տրված գնահատականները գրեթե անփոփոխ կարող են հնչել նրանց նահատակվելուց դար և ավելի ժամանակ անց: Քրիստափոր Միքայելյանը միանշանակ նման գործիչներից մեկն է: Վիտոշի աղետից 120 տարի անց մեզ նույնպես մնում է լոկ հարգանքի տուրք մատուցել Հայոց ազատամարտի մեծ նահատակին ու կրկնել ժամանակին հնչած ամփոսանքի խոսքերը:

Գրականության ցանկ

Yeghishe Ch'arents'i anvan Grakanut'yan yev arvesti t'angarani arkhiv (GAT'), Avetik' Isahakyan fond, vav. N 233 lrats'uts'ich', t't'. 31-34:

Aharonean A., K'ristap'vor Mik'ayeleon, Post'yn, 1926:

Aghetawor mahy // «Droshak», 1905, N 4, ej 51-53:

Andznuyer gortsoghi yishatakin // «Mshak», 12 marti 1906, N 55, ej 1-2:

Grigoryan H., Avetik' Isahakyany K'ristap'vor Mik'ayelyani masin, Antip namakner HH grakanut'yan yev arvesti t'angarani arkhivits' // «Vem» hamahaykakan handes, 2012, t'iv 3, ej 204-210:

Leo, Ants'yalits', T'iflis, 1925:

Leo, Law mardu yishatakin // «Mshak», 10 marti 1905, N 42:

Hambardzumyan H., K'ristap'vor Mik'ayelyani hetk'erov, Ts'arakan vostikanut'yan departamenti hatuk bazhni 1905 t'vakani t'ght'atsrary // «Vem» hamahaykakan handes, 2009, t'iv 3, havelvats, ej I-XX:

Varandean M., K'ristafor Mik'ayeleen, «Hayrenik'» amsagir, Post'yn, 1924, NN 3, 5, 8, 12:

Ter-Awyetik'ean S., Anmorranali gortsich'i yishatakin, // «Mshak», 20 marti 1905, N 50:

Tertuni, Lrrut'iwn, // «Dzayn hayreneats'», 26 aprili 1905, N 337:

Frangean Ye., K'ristap'vor Mik'ayElean. nra keank'y yev ashkharhayets'voghut'iwny, Bagu, 1917:

K'ristap'vori yev Edvardi yishatakin // «Droshak», 1907, N 3, ej 42-43:

K'ristap'vor Mik'ayeleen // «Droshak», 1905, N 4, ej 51-52: